

ՀԱՅԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 4500-ԱՄՅԱԿԸ

2008թ. լրանում է Հայկ Նահապետի՝ Հայոց Ձորի (Վանա լճից հարավ) ճակատամարտում Բելի դեմ տարած հաղթանակի 4500 տարին Այս տոմարագիտական հաշվարկը կատարել է մեծանուն հայագետ Ղևոնդ Ալիշանը (1820-1901), հիմնվելով Հայոց բուն թվականի «Հայկի շրջանի» («Հայկայ շրջանի») պարբերականության վրա: Հին հայկական տոմարը նահանջ տարի չուներ, քանի որ տարին միշտ համարվում էր 365 օր, ուստի տարին և թվականը շարժական էին: Հուլյան տոմարի 1460 տարվա ընթացքում տարբերությունը լրանում է հին Հայկական տոմարի յուրաքանչյուր 1461 տարում: «Հայկի շրջանի» այսպիսի պարբերականությամբ Ք. ա. 2492 թ. նշանավորվեց Հայկի հաղթանակով: Հաղթական տարվա սկիզբն էր Նավասարդի 1-ը (օգոստոսի 11)*: Հայ Առաքելական Եկեղեցին եկեղեցական օրացույցում մշտապես նշում է տարիները ըստ «Հայկի շրջանի»:

Պատմահայր Մովսես Խորենացին (V դար) Բելին ներկայացրել է որպես աշխարհին տիրելու ձգտող չար ուժերի գլխավոր: Հայկ նահապետը շենացնում էր Հայոց աշխարհը, երբ Բելը փորձեց նրան ենթակայեցնել: Սակայն Բելի նույնիսկ ահռելի ուժերը չօգնեցին նրան: Հայոց Ձորի ճակատամարտում Հայկը իր լայնալիճ աղեղից արձակած երեքթևյան նետով սպանեց Բելին: Հայկի հաղթանակը խորհրդանշում էր Լուսի ուժերի հաղթանակը խավարի հրոսակների նկատմամբ

Հազարամյակների խորքից եկող հայոց պատմության առանցքը՝ պայքարն է օտար նվաճողների դեմ, որի ակունքներում է Հայկ Նահապետի հաղթանակը, որը հետագա հաղթանակների առհավատյալն դարձավ

Հայրենիքին նվիրվելը, ստեղծագործ աշխատանքով ծառայելը, սխրագործելը և հանուն Հայրենիքի ազատության կյանքը չինայելը հայոց ոգու հրամայականն է: Հայ Առաքելական Եկեղեցին Վրթանես կաթողիկոսի՝ 337թ. սահմանած կանոնով Վարդան Չորավարին և նրա հետ Ավարայրի ճակատամարտում (451թ.) հանուն Հայրենիքի և Հավատի, Քրիստոսի Խաչով իրենց կյանքը պատարագած հայորդիներին դասեց սրբերի շարքը:

ՀԱՅԿՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ամեն հայի սրտում է, արյան ամեն կաթիլի մեջ, հայորդիներին մղելով սխրագործելու ՀԱՅԿԱԲԱՐ: Նոր վկաներն են Արցախի հաղթական հերոսամարտի բազում հայ ազատամարտիկները և զորավարները

* Հայկական լեռնաշխարհում աստղային երկնքի դիտարկումների (Ք.ա. VI հազ. - Չորաց քար, Ք.ա. III հազ. առաջին կես – Մեծամոր), հնագիտական պեղումների և ժայռապատկերների հետ կապված նոր հայտնագործությունները վկայում են Հայկյան խորքային արմատների մասին, և Հայկի Ք. ա. 2492թ. փառապանծ հաղթանակը խորհրդանշում էր Հայոց պատմության մեջ շատ կարևոր նոր դարաշրջանի սկիզբը: